բակ ժողովրդոց և տանն հայոց պարգևս գտցէ, այլ եթէ ստութեամբ և նախանձու մատնիցէ այր արդար՝ պատժեսցի։

ԳԼՈՒԽ ՃԻԱ.

Ամենայն մարդ կարող է վաճառել ստացուածս իւր բաց 'ի բնութիւն մարդկան։

ԳԼՈՒԽ ՃԻԲ.

Կատարելապէս վաճառելն, պարտ է գնողն ստանասցէ վաճառողէն թուղթ ձեռնադրեալ երկու վկայիւք՝ եթէ ոչ անկատար լիցի։

ԳԼՈՒԽ ՃԻԳ.

Ամենայն թուղթ ում ոք որ իցէ ձեռնադրեալ եթէ վասն վաճառանաց եթէ դաշնադրութեան և այլն՝ եթէ գտցի ընդ դէմ Օրինաց հայոց և կամ ընդ դէմ բնական բնութեան մարդոյ անարժան լիցի։

ԳԼՈՒԽ ՃԻԴ.

Վարձս դրամոյ առանց վտանգի շահեցուցանելոյ մի՛ լիցի աւելի շահ քանթէ 'ի մի հարիւրին տարէն վեց։

ԳԼՈՒԽ ՃԻԵ.

Աւելի քանթէ մի հարիւրին տարէն վեց,